623.5
Ц-11

1928

623.5

...րներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀՐԱՑԱՆՆԵՐԻ, ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԳՆԴԱՑԻՐՆԵՐԻ ԽՓԵԼՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1928

13.445
12 SEP 2013
623.5
Խ-11
4կց. 376
1003
13640

Խ. Ս. Հ. Մ. Հ. Ս. Խ. Հ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»
1923 թվի Դեկտեմբերին
ք. Մոսկվա.
ԽՍՀՄ բոլոր զինված ուժերի
գլխավոր հրամատար՝ [redacted]
ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի անդամ [redacted]

ՀՐԱՑԱՆՆԵՐԻ, ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԳՆԴԱՑԻՐՆԵՐԻ ԽՓԵԼՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐԸ

1928 № 31 ՄԱՐՏՈՒՆԱԿԱՆ

Հայկական Հրաձիգ Դիվիզիայի Քաղբաժնի խմբագրական հրատարակչական մաս.

Հայպետհրատի Մարտունեկանի տպարան
Պատվեր № 516. Տիրաժ 1000. Գրառեպ. № 576 բ.

ՀՐԱՑԱՆՆԵՐԻ, ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՅԵՎ ԳՆԴԱՑԻՐՆԵՐԻ ԽՓԵԼՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Խփելու կուտակությունը և նշանառության կետի վերաբերմամբ դիպման միջին կետի նորմալ դրությունը վորոշելու համար՝ ժամանակ առ ժամանակ պետք է ստուգել զորամասերի սպառազինումը կազմող ամբողջ զենքի խփելը։

Ստուգումը կատարվում է հատուկ հրաձգության միջոցով, վորը կոչվում է «**խփելու ստուգում**»։

Ա. ՀՐԱՑԱՆՆԵՐԻ ԽՓԵԼՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ

1. Վաշտում (հեծելավաշտում, խմբում) յուրաքանչյուր հրացանի խփելու ստուգումը պարտադիր է.

ա) յերբ հրացանը պահեստից կամ գործարանից դուրս է տրվում սպառազինման համար.

բ) յերբ վերադարձնում են զենքի արհեստանոցից, այնպիսի նորոգումից հետո, վոր կարող է փոխել նրա խփելը, ինչպես որինակ՝ յերբ փոխում կամ ուղղում են նրա փողը, ագուստը, նշանոցի շրջանակը, սվինը և այլն.

գ) տարին մի անգամ, զորամասի հրամատարի կարգադրությամբ, առավելապես հրաձգության դասընթացի սկզբին.

դ) վաշտի (հեծելավաշտի, խմբի պետի) հրամատարի հայեցողությամբ ամեն անգամ, երբ հրաձգության միջոցին ակնհայտ կերպով պարզվում է, որ հրացանը չափազանց ցրում կամ խոտորում է գնդակները՝ ըստ բարձրության կամ դեպի մի կողմ։

2. Ստուգման համար նշանակված հրացանները ամենից առաջ մանրակրկիտ կերպով զննում ու ստուգում են №№ 1, 3, 7 և 14 բ. կալիբրաչափերով, և ըստ հնարավորին, վերացնում են նրանում նկատված թերությունները ու սարքելու անկանոնությունները։ Զննումը պետք է կատարի զինապետն անձամբ. իսկ եթե այդպիսին չկա՝ ապա վաշտի (հեծելավաշտի, խմբի պետի) հրամատարը։

Հրաձգությունից անմիջապես առաջ հրացանի փողը պետք է սրբել չորացնել։

3. Խփելու ստուգման համար նշանակված փամփուշտները նույնպես պետք է նախապես զննել և տեսակավորել։ Նախապես հայտնի վատորակ և իրենց արտաքին տեսքով կասկած առաջացնող փամփուշտները գործադրել այդ նպատակի համար չի թույլատրվում։

4. Հրաձգությունը կարելի չի կատարել ձգարանում (տիրում) կամ բաց հրաձգարանում։ Վերջին դեպքում՝ խաղաղ և, ըստ հնարավորին, պարզ յեղանակին։

5. Հրաձգությունը հանձնարարվում է ամենալավ, հատկապես ընտրած ու փորձված հրացանաձգին, վաշտի (հեծելավաշտի խմբի պետի) հրամատարի անձնական ղեկավարությամբ և

հրացանի տիրոջ ներկայությամբ։ Ներկա պետք է լինի և գտնվի զինագործ վարպետը կամ նրա ոգնականը անհրաժեշտ գործիքներով՝ հարկավոր դեպքում հատիկը տեղափոխելու, խարտոցելու, փոխելու, սևացնելու կամ ամրացնելու համար ինչպես և հրացանի աննշան ուղղումները կատարելու համար։

6. Իբրև նշավակ (թիրախ) ծառայում է վահանը՝ վոչ պակաս, քան 1 մետր բարձրությամբ և կես մետր լայնությամբ։ Նա դրվում է կրակի գծից ճիշտ չափած 100 քայլ (71 մետր) հեռավորության վրա։ Յեթե հարմար հրաձգարան չկա, ապա խփելու ստուգումը թույլատրվում է և 50 քայլից (35 մետր), ծայրահեղ դեպքում, իբրև բացառություն, նույնիսկ 5 քայլից (17 մետր)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ավելի լավ է այդ նպատակի համար Հրաձգային Հանձնաժողովի կողմից հավանություն գտած հատուկ նշավակ ունենալ։

Հավելված № 1 և № 2.

7. Հրաձգությունը պետք է կատարվի 4 նշանոցով։ Նշանառության կետ պիտի ծառայի վահանի մեջտեղում ամրացրած սև խնձորի (թզենի կամ ավելի լավ է մահուդից պատրաստած բոլորակի, ցածրի յեզրը։ Սև խնձորի տրամագիծը պետք է լինի՝ 100 քայլի վրա՝ 10 սանտիմետր, 50 քայլի վրա՝ 6 սանտ., և 25 քայլի վրա՝ 3 սանտիմետր։

8. Նշանառության կետի (խնձորի ցածի յեզրը) վերևում, ուղղաձիգ գծով, վահանի վրա նշվում է դիպման միջին կետի դրությունը։ Նը-

կատի ունենալով նշանոցի հաստումը—4, այդ կետը պետք է գտնվի (գծանկ. № 1)։

100	ք.	հեռ.	համար	նշանառ.	կետից	12	սմ. բարձր
50	»	»	»	»	»	6	» »
25	»	»	»	զուգադիպում է նշանառութ. կետին			

9. Հրացանի խփելը գնահատելու համար, յերկաթալարից կամ յերկաթե թիթեղից վերստուգիչ շրջան են շինում իր խաչկապով (ամրության և կենտրոնը նշանակելու համար)։ Այդ շրջանի ներքին չափը տրամագծով պետք է համապատասխանի նորմալ խփող հրացանի ցրմանը, այսինքն՝

100	քայլ	հեռավոր.	համար	13	սանտիմետր
50	»	»	»	7	»
25	»	»	»	4	»

10. Կրակի գծի վրա, ճիշտ վահանի դիմաց, գետեղում են ստուգման հաստոցը (գծանկար № 2), վոր կայուն նստարան է, մի քիչ դեպի ներս թեքված սեղանով. վերջինիս յերեսի վրա կտրատ է շինած հրացանագի կրծքի համար, իսկ կողքերում թևեր՝ արմունկներն հենելու համար։ Սեղանի վրա դրած պետք է լինի հրացանի համար փափուկ հենարան՝ ավազով կամ փայտի թեփով լիքը տոպրակ, ճիմ և այլն։

ՍՏՈՒԳՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ

11. Հրացանաձիգը նստարանի վրա հեծած նստելով և վոտքերով հարմար հենվելով գետնին, հրացանի փողակալը դնում է հենարանի վրա այնպես, վոր հենարանը մոտավորապես ընկնի նշանոցի տակ. ապա, արմունկներով հենվելով սեղանին, հրացանի կոթը ձախ ձեռքով կիպ ուսին պահելով, մանրազնին և միակերպ նշան պետք է բռնի հավասար հատիկով խնձորի ցածի յեզրի տակին և զգուշանալով հրացանի թեքվելուց իրար յետևից առանց շտապելու 4 անգամ արձակի։ Չպետք է կրծքով ուժեղ հենվել սեղանին։

12. Հրաձգությունից հետո վաշտի (հեծելավաշտի, խմբի պետի) հրամատարը զննում է վահանը, և հրաձգության հետևանքով գնահատում է հրացանի խփելու ճշտությունը, ինչպես բերված է ներքևում։

13. Հրացանի խփելը նորմալ է համարվում, յերբ վոչ պակաս, քան 3 ծակատ ամբողջովին գետեղվում է վերստուգման բոլորակի մեջ, վորի կենտրոնը պետք է գնել դիպչելու միջին կետի նորմալ դրության նշանի վրա։

14. Յեթե ծակատները վերստուգման բոլորակից դուրս են մնում (§ 13), ապա անհրաժեշտ է վորոշել խփելու կուտակությունը։

Այդ վորոշվում է նախապես պատրաստած (§ 9) վերստուգման բոլորակը ծակատների վրա դնելով։ Յեթե բոլորակը տեղափոխելով կարելի լինի նրա մեջ տեղավորել 3 ծակատից վոչ պակաս, ապա հրացանը, կուտակության տեսակետից համարվում է նորմալ (գծանկ. № 3)։

15. Յեթե ծակատներն այնպես են դասավորվում, վոր վերստուգման բոլորակի մեջ 3 գնդակ չի տեղավորվում, ապա հրացանը, վորով կատարվել է հրաձգությունը, մանրակրկիտ կերպով զննվում է զինապետի կողմից և նորից ստուգվում է հրաձգությամբ։ Յեթե հետևանքը կրկին ան-

բավարար է, ապա այդպիսի հրացանը պետք է ուղարկել զենքի արհեստանոցը՝ սարքի բերելու համար, իսկ յեթե հարկավոր համարվի, խոտանելու համար։

Ի գիտություն զինապետին, ուղարկվում է և հաշվառման քարտը, թե առաջին և թե յերկրորդ հրաձգության ժամանակ ստացված դիպումների նիշերով։ (Հավելված № 3. հաշվառման քարտի ձևը)։

16. Հրացանի դիպման միջին կետի դրությունը վորոշվում է ծակատներով։ Դրա համար ուղիղ գծերով պետք է զույգ-զույգ միացնել խաչաձև ընկած ծակատները. յերկու ուղիղ գծերի հատման կետը կլինի դիպման միջին կետը։

Այլ միջոց՝—զույգ-զույգ պետք է միացնել ծակատները (վոչ խաչաձև ընկածները) և ամեն մի ուղիղ գիծը կես անել, միացնել նրանց մեջտեղերը մի ուղիղ գծով և այդ գիծը նորից կես անել. կիսման այդ կետը կլինի դիպման միջին կետը։

Յեթե չորս ծակատից մեկը չափազանց խոտորել է մնացած ծակատների խմբից դեպի մի կողմ, ապա կարելի յե նրան հաշվի չառնել և դիպման միջին կետը վորոշել 3 ծակատով։ Դրա համար պետք է այդ ծակատներից վորևե յերկուսը միացնել ուղիղ գծով և այդ գիծը հավասար կիսել։

Այդ գծի մեջտեղը միացնել յերրորդ ծակատի հետ և այդ գիծը բաժանել յերեք հավասար մասի։ Այդ դեպքում դիպման միջին կետը կգտնվի յերրորդ ծակատից յերկու բաժանում հեռու (գծանկ, № 4.).

17 Յեթե անհրաժեշտ լինի տեղափոխել հատիկը, այն ժամանակ հրացանը տրվում է զինագործ վարպետին՝ համապատասխան տեղաշարժություն անելու, խարտոցելու կամ հատիկը փոխելու համար։ Հատիկը խարտոցում են, յեթե դիպման միջին կետը ցածր է, փոխում են ավելի բարձրով՝ յեթե բարձր է. դեպի ձախ (աջ) են տեղափոխում, յեթե հրացանն ավելի ձախ (աջ) է խփում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Հատիկի բոլոր տեղափոխությունների միջոցին հանձնարարվում է ոգտագործել Հրաձգային Հանձնաժողովի կողմից հավանություն գրտած գործիքը, վոր ավտոմատորեն ցույց է տալիս տեղափոխությունների մեծությունները։

18. Բարձրությամբ կամ կողքի ուղղությամբ հատիկը յերկու կետի չափ՝ (հատիկը տեղափոխելու գործիքի մեկ բաժանումով) տեղափոխելու դեպքում դիպման միջին կետը տեղաշարժում է դեպի հակառակ կողմը՝—100 քայլ հեռավորության վրա 5 սանտիմետր, 50 քայլի վրա՝ $2^1/_2$ սանտիմ., 25 քայլի վրա, $1^1/_4$ սմ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։—Հատիկի խարտոցումը պետք է համահավասար կատարել նրա վերին կողի ամբողջ յերկարությամբ։ Ստացված քեծերը պետք է մաքրել։ Յեթե խարտոցելուց հետո նշանոցի շրջանակի կրնկի վաքի վոչ բավարար խորությունը դժվարացնի մշտական նշանոցով նշանառությունը, ապա վաքն էլ պետք է խարտոցելով խորացնել։

19. Յեթե դիպման միջին կետը մեծ խոտորում ունի, վոր պահանջում է հատիկի կատարի տեղափոխում դեպի վեր, վար կամ մի կողմը ավելի, քան վեց կետ, ապա հրացանը հաշվառման քարտի հետ միասին պետք է ուղարկել

զենքի արհեստանոց՝ մանրամասն զննության համար։

20. Յերբ խփելու ստուգումը վերջացած է համարվում, հատիկը պետք է ամրացնել հատիչի ոգնությամբ նրա հիմքի մեջտեղը նրա թաթիկները փոսիկներից մեկի մեջ խցկելով՝ հատիկի և նրա հիմքի վրայի հին նիշերը պետք է խարտոցելով մաքրել և նրանց փոխարեն նոր նիշեր անել։ Յեթե հատիկի և հիմքի առջևի կտրվածքի վրա նիշ անելն անհնարին է, նիշը պետք է անել հատիկի թաթիկներից մեկի և հիմքի վերևի հարթության վրա։

Բ. ՄԱՔՍԻՄԻ ԳՆԴԱՑԻՐՆԵՐԻ (ՀԱՍՏՈՑԱՎՈՐ) ԽՓԵԼՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ

1. Մաքսիմի գնդացիրների խփելու ստուգումն ընդհանրապես կատարվում է նույն կանոններով, ինչպես և հրացանների խփելու ստուգումը, միայն հետևյալ հոդվածներում ցույց տրված փոփոխություններով։

2. Ստուգումը պարտադիր է՝

ա. Յերբ գնդացիրը պահեստից կամ գործարանից զորամասն է մտնում։ Վերջին դեպքում գնդացիրը պետք է ստուգման յենթարկել ոչ միայն համալրման, այլև հերթով բոլոր պահունի փողերով։

բ. Նշանոցի մուրթակը, քանոնը խաղերով, ուղղանը կամ հատիկը փոխելուց կամ խոշոր նորոգումից հետո։

գ. Տարին մի անգամ՝ զորամասի հրամատարի կարգադրությամբ։

դ. Գնդացրային վաշտի հրամատարի հայեցողությամբ, յեթե հրաձգության ժամանակ

ակնհայտ կերպով պարզվել է, որ գնդացիրը չափազանց ցրում է գնդակները

3. Հրաձգությունը կատարվում է գնդացրին պատկանող հաստոցի վրա։ Թե հաստոցը և թե գնդացրի մարմինը նախապես պետք է զննել և ուշադրությամբ սարքի բերել։ Հրաձգության համար նրան պետք է պինդ հարթակի վրա հաստել, իսկ խոփիկը գետնի մեջ խրել մինչև առատամը գետնին հենվելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե գետինը փափուկ է, ապա գետնի մեջ նստեցնելու համար անհրաժեշտ է .0-ից վոչ պակաս անգամ արձակել։

4. Նշանառուն, նշանոցը 4, ուղղանը 0-ի վրա հաստած գնդացիրն ուղղում է սև խնձորի տակին (նույն մեծությամբ, ինչ վոր հրացանի համար է) և ամրացնում է վերամբարձ մեքանիզմը և ցրող հարմարանքը. ապա համոզվելով, վոր այդ ժամանակ չի խախտվել նշանառությունը, ավտոմատիկ կրակով արձակում է 10 փամփուշտի մի հերթ։ Նորից ստուգում է, թե չի՞ խախտվել արդյոք գնդացրի նշանառությունը։ Յեթե պարզվի, վոր նշանառությունը խախտվել է, ապա հետազոտում է դրա պատճառը։ Յեթե այդ կատարվել է գնդացրի նստելուց, ապա վերացնելով այդ՝ պետք է հրաձգությունը կրկնել։

5. Գնդացրի խփելը համարվում է նորմալ, յեթե 8-ից վոչ պակաս ծակատներ ամբողջովին տեղավորվում են վերստուգման քառանկյունու մեջ, վոր իր կենտրոնով պետք է դնել դիպման միջին կետի նորմալ դրության նիշի վրա. այդ վորոշվում է նույնկերպ, ինչպես հրացանի խփելու ստուգման ժամանակ (§ 8)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—25 քայլի վրա դիպման նորմալ միջին կետը 4 սանտ. ցածր է նշանառության կետից։

Վերամուգման բառանկյունու չափերը.

				բարձրութ.	լայնութ.
100	քայլ	հեռավ.	համար	26 սմ.	18 սմ.
50	»	»	»	13 »	9 սմ.
25	»	»	»	7 »	5 սմ.

6. Դիպման միջին կետը վորոշելու համար ուղղաձիգ և հորիզոնական գծեր են քաշում այնպես, վոր նրանց յերկու կողմերում դասավորված լինեն 4-ական ծակատ։ Դիպման միջին կետը այդ գծերի հատման տեղը կլինի։

7. Յեթե հոդվ. 5-ում մատնանշված պայմաններն իրագործելի չեն ապա պետք է անել հրացանների համար ասածի նման։

8. Պահունի փողերն ստուգելու համար նրանց հերթով փոխարինում են համալրման փողերով։ Ստուգումը կատարվում է ինչպես վերևում ասված է, միայն այն տարբերությամբ, վոր խփելը շտկելու համար հատիկը վոչ մի փոփոխության չենթարկում։ Ամեն մի պահունի փողի խփելը (խփելու տվյալները) մուծում են հատուկ մատյանի մեջ (ֆորմուլյար), վոր միշտ պահվում է փողի հետ միասին, հարկավոր դրպեին տեղեկանք ստանալու համար։

Դիպման միջին կետի խոտորումը, վոր ստացվել է հրաձգության միջոցին, նշվում է մատյանում, ըստ վորում դեպի կողմ խոտորումը չափում են ուղղանի միջոցով և գրանցում վերջնիս խազերով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Զեռքի գնդացիրների և ավտոմատների խփելն ստուգում են հրացանի խփելու ստուգման համար մատնանշած կանոնների համաձայն։

ԲԱՌԱՅՈՒՅԱԿ

Ագուստ ложа
Առատամ хобот
Ավտոմատ автомат
Բոլորակ кружок
Գնդացիր пулемет
Դիպում попадание
Դիպման, դիպչելու, կետ точка попадания
Զինապետ заведывающий оружием
Զինագործ վարպետ оружейный мастер
Թաթ, թաթիկ лапа, лапка
Ծակատ пробоина
Խարտոցել опилить
Խաչկապ перекрестье
Խոտանել браковать
Խոփ (իկ) сошник
Կալիբրաչափ лекало
Կուտակություն кучность
Կտրվածք срез
Կրունկ пятка
Համալիր комплект
Համալրման փող комплектный ствол
Հաստոց станок
Հաստոցավոր գնդացիր станковый пулемет
Հատիչ зубило
Հարթակ площадка

Հենարան упор
Հեռակայություն дистанция
Հրաձգության դասընթաց курс стрельбы
Հրաձգարան стрельбище
Հրացանի կոթ приклад
Զգարան тир
Ճիմ дернина
Մութակ стойка
Նիշ метка, отметка
Նշանառու наводчик
Նշանառություն прицеливание
Նշանոց прицел
Նշանոցի շրջանակ прицельная рамка
Նշավակ, թիրախ мишень
Շրջան круг
Ուղղան целик
Պահունի запасный
Սվին штык
Սպառազինում вооружение
Վահան щит
Վատորակ недоброкачественный
Վաք желоб, желобок
Վերստուգման բոլորակ контрольный круг
Վերստուգման քառանկյունի контрольный четыреугольник
Տեսակավորել сортировать
Տրամագիծ диаметр
Փող ствол
Փողակալ цевье
Քանոն планка
Քեռ заусеница



Գծանկ. № 1.



Գծանկ. № 2.



Գծանկ. № 3.



Գծանկ. № 4.

Գնդացրի խփելն սառուցելու 100 քայլի վրա (սանտիմետրով)։



6/6 բնական մեծության

Հաստատ

Հրացանի խփելն ս
վրա (սանտիմետրա
խփելը ստուգելու
տիմետրով) հեռա-



.....գնդի կ

.....վաշտի

Հրացան №.....

Վաշտի հրամանատ

Հրացանի խփելը ն
յեթե չորս ծակա
Ջոփին գտնվում
լոբակի մեջ։

ծության

5/6 բնական

«Ազգային գրադարան»
NL0278922

13.445